

## ԳԵՎՈՐԳ ԶԱՐՈՒԿՅԱՆ



Լրացավ մեծ գիտնականի ծննդյան 80-ամյակը: Այս հորելյանական տարելիցը առիթ է ստեղծում մեկ անգամ ևս անդրադառնալու նշանավոր հայագետի ու լեզվաբանի կյանքին ու գործունեությանը, հանրագումարի բերելու և գնահատելու նրա անցած ճանապարհը:

Գևորգ Զահուկյանի կյանքը հարուստ էլ է պոտաքին փաստերով և իրադարձություններով, բայց այն օրինակ է ներքին լարված ու հարատև աշխատանքի, անշեղ ու վերընթաց կատարելագործման, նվիրումի ու ինքնստատաման և որպես այդ ամենի պոլյունքի՝ գնահատանքի ու ճանաչման:

Այդ է վկայում ստորև բերվող՝ նրա կյանքի համառոտ տարեգրությունը:

Գևորգ Բեզլարի Զահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Կպլինոնոյի շրջանի Շահնազար (այժմ՝ Լոռու մարզի Սեժական) գյուղում:

1937 թ. ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը:

1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1942-1943 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1945 թ. առ այսօր դասավանդում է Երևանի պետական համալսարանում (1945-1949 թթ. բանասիրական ֆակուլտետի ավագ դասախոս, 1948-1957 թթ. օտար լեզուների ամբիոնի վարիչ, 1957-1970 թթ. ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, 1970 թ. առ այսօր՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր):

1947 թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1949-1950, 1959-1962 թթ. եղել է ԴՍՄ ԳԱ Դ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1949 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

1955 թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1958 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1962 թ. առ այսօր Դայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Դ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի անվտոմոխ տնօրենն է:

1965 թ. արժանացել է Դայաստանի Դանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման:

1968 թ. ընտրվել է Դայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

1970 թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով և Մխթարյան միաբանության արծաթե մեդալով:

1974 թ. ընտրվել է Դայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Եռյն թվին ընտրվել է Եվրոպայի լեզվաբանական ընկերության անդամ:

1976 թ. պարգևատրվել է «Պատվոն ճշան» շքանշանով:

1980 թ. ընտրվել է ԱՄՆ-ի լեզվաբանական ընկերության անդամ, նույն թվին պարգևատրվել է Մաշտոցի անվան Մատենադարանի «Մետրոպ Սաշտոց» հուշամեդալով:

1980 թ. առ այսօր «Յայ լեզվաբանության տարեգիր» (Annual of Armenian Linguistics, UUL) պարբերական հանդեսի խզմբագրական կոլեգիայի անդամ է:

1986 թ. պարզևատրվել է Գոլտեմբե-րյան հեղափոխության շքանշանով:

1986 թ. արժանացել է Գայկական ՍՄԳ պետական մրցանակի՝ «Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» մենագրության համար:

1988-1993 թթ. եղել է «Вопросы языкознания» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ:

1990 թ. պարզևատրվել է Երևանի պետական համալսարանի մեդալով՝ գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար:

1990 թ. առ այսօր «Studia indogermantica» հանդեսի գիտական խորհրդատու է:

1994 թ. նրան շնորհվել է Գանազգային հայ կրթական և մշակութային միության մրցանակ «Յայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցեր» աշխատության համար:

1995 թ. արժանացել է Գայատանի Գանրապետության գիտության ազգային մրցանակի:

1997 թ. Քեմբրիջի միջազգային կենսագրական կենտրոնի կողմից ճանաչվել է «տարվա միջազգային մարդը»:

Գ. Զահուկյանը այն բացառիկ հետազոտողներից է, որոնց գիտական հետաքրքրությունների ոլորտն աչքի է ընկնում արտակարգ լայնությամբ ու խորությամբ: Գայագիտության գրեթե բոլոր ճյուղերում, ընդհանուր լեզվաբանության և լեզուների համեմատական ըննության բնագավառներում նա հանդես է եկել հիմնարար աշխատություններով, որոնք դարձել են ուղեմիշ ու ելակետ հայ լեզվաբանների ներկա ու հաջորդ սերունդների համար:

130-ից ավելի գիտական հրատարակումներում, այդ թվում երկու տասնյակից անցնող ծավալուն մենագրություններում, բազմաթիվ հոդվածներում, ստուգաբանական ըննություններում նա միշտ նոր է ու ինքնատիպ, բայց և հենկում է անցյալի ժառանգության վրա, որը յուրովի գնահատում ու արժեքավորում է իր գործերում: Նրա առաջին մենագրությունը նվիրված է եղել հին և միջնադարյան Գայատանում քերականական և ուղղագրական աշխատություններին, հետագայում նա ամբողջացրել է հայ քերականական մտքի պատմությունը մի նոր մեծադիր հատորով: Եզակի է նրա «Լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը, որտեղ ներկայացված է այդ գիտության սկզբնավորումն ու զարգացումը աշխարհագրական և ժամանակագրական ամենալիակատար ընդգրկմամբ:

Գ. Զահուկյանը հայերենի համեմատական քերականության ամենաճանաչված մասնագետն է: Այս բնագավառում նրա առաջին աշխատությունը նվիրված է հայերենի հոլովման համակարգի ծագմանը: Նշենք ի դեպ, որ այս գրքում ի թիվս այլ հայտնագործումների ու ճշգրտումների նա սահմանում է հոլովման տարբեր տիպերին բառերի պատկանելության օրենքներ, մի խնդիր, որ Ա. Սեյեն, Գ. Աճառյանը ժամանակին համարել են անլուծելի: Այնուհետև իրար հետևից լույս են տեսնում մի շարք հնդեվրոպական և այլ լեզվաընտանիքների պատկանող հին ու հնագույն լեզուների հետ հայերենի առնչություններին նվիրված նրա աշխատությունները: Զահուկյանն առաջինն է ընկել հնդեվրոպական, խուռուրարտական և կովկասյան լեզուների փոխառաբերությունը բացահայտելով հնդեվրոպական-խուռուրարտական զուգաբանություններ, որոնք վկայում են այդ լեզվաընտանիքների միջև եղած հեռավոր ցեղակցության մասին: Նա առաջինն է նաև, որ ուշադրություն է դարձնում հայերենից ուրարտերենին, խեթալուվական և այլ հնագույն լեզուներին անցած փոխառություններին, տալով նոր ստուգաբանություններ, ինչպես նաև լեզվական նոր փաստերի հիման վրա ուսումնասիրելով հայերենի անհայտ ծագման բառապաշարը: Բացի հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունից Գ. Զահուկյանը զբաղվել է հնդեվրոպաբանության համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցերով, ինչպիսիք են՝ հ. -ե. նախալեզվի վերականգնումը, նրա բարբառային մասնատվածությունը, հ. -ե. լեզվաընտանիքի հեռավոր ցեղակցությունը, նոստրատիկ լեզվաբանությունը: Գանեմատական լեզվաբանության առանձին պորբլեմներից գիտնականն անդրադառնում է կիմերների և կիմերերենի խնդրին՝ փաստերի համակողմանի ըննությամբ ժխտելով այն կարծիքը, թե կիմերները հայերի նախնիներն են, էտեոկիպրերենի (մ. թ. ա. VIII-II դդ. Կիպրոսում վկայված վանկազիր արձանագրությունների (լեզվի) վերծանությանը՝ առաջ քաշելով այդ լեզվի՝ խուռուրարտական ընտանիքին պատկանելու վարկածը, ընկնում է այնպես կոչված հնդեվրոպական լարինգալների արտացոլման հարցերը և այլն:

Գ. Զահուկյանի ուշադրության կենտրոնում են նաև տեսական լեզվաբանության մի շարք կարևոր հարցեր, որոնք հաճախ զտնում են ինքնուրույն լուծումներ կամ դիտարկվում

են նոր տեսանկյունից: Նրա աշխատություններում նոր լուսաբանություն են ստանում լեզվի և խոսքի փոխադարձությունը, լեզվական միավորների ու նրանց տարբերակիչ հատկանիշների, քերականական կարգերի, լեզվի կառուցվածքային մակարդակների, լեզվական ու լեզվաբանական կաղապարների, լեզվաբանական հետազոտության մեթոդների, լեզվաբանության կառուցվածքի ու անդրլեզվաբանության և այլ կարևոր հիմնահարցեր:

Լույսը արժեքավոր են նրա հետազոտությունները հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, ժամանակակից հայերենի տեսության ասպարեզում լեզվական փաստերի լիակատար ընդգրկման, նոր մեկնաբանության, անհակասական դասակարգման ու համարժեք նկարագրության սկզբունքների մշակման, ինչպես նաև տվյալ բնագավառում լեզվաբանական գիտության հեռանկարների ուրվագծման տեսակետից:

9. Զահուկյանի շատ գաղափարներ, մշակումներ ու լուծումներ լայնորեն ընդունված են լեզվաբանության մեջ, գտել են շարունակողներ ու հետևորդներ: Չտակապես պետք է նշել հայերենի պատմական գարգացման շրջանաբաժանման մշակումը, նոր գիտակարգի վիճակագրական բարբառագիտության ստեղծումը, հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի տարածքային դիրքի և հայերենի երկրորդ հ.-են. շերտի որոշումը, հնդեվրոպական նախալեզվի տարածքային ու կառուցվածքային տարբերակայնության բնորոշումը, ժամանակակից հայերենի կառուցվածքի մեջ նոր քերականական կարգերի սահմանումը և վերջապես համընդհանուր լեզվաբանական կաղապարի առաջադրումը, որը նոր հորիզոններ է բացում լեզուների տիպաբանության, իմացաբանական ու լեզվաբանական կարգերի քննության, լեզվական ու արտալեզվական օբյեկտների անհակասական ու լիակատար նկարագրության համար:

Սեժ է նրա դերը նաև հայ լեզվաբանների ուժերի համախմբման, հետազոտական նոր մեթոդների և ուղղությունների արմատավորման բնագավառում: Գրեթե մի քառասունյակ աշխատելով Չայաստանի Չանրապե-

տության ազգային ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում՝ նա իր գիտելիքները, փորձը և գիտության կազմակերպչի ծիրքը ի սպաս է դրել լեզվաբանության տարբեր ծյուղերի զարգացմանը, մատնացույց է արել հայագիտության առջև ծառայած խնդիրները, նախանշել աշխատանքների հիմնական ուղղությունները, պատրաստել երիտասարդ լեզվաբանների մի ողջ սերունդ: Չամայսարանում և այլ բուհերում նրա մանկավարժական աշխատանքի շնորհիվ աճել են բազմաթիվ մասնագետներ, որոնք նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանել են թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ:

Չայաստանի և արտասահմանի գիտական հանդեսներում նրա տպագրած հոդվածները միշտ շարժել են գիտական հասարակայնության հետաքրքրությունը, հուշել են նոր մտքեր ու գաղափարներ:

Առանձնահատուկ կերպով ուզում ենք նշել նրա գործուն մասնակցությունը «Բաները երևանի համալսարանի» գիտական հանդեսի աշխատանքներին: Լույս տեսած առաջին իսկ համարներից մինչև օրս «Բաներում» տպագրվել են գիտնականի երկու տասնյակից ավելի հոդվածներ: Երկար տարիներ նա եղել է հանդեսի խմբագրական մարմնի անդամ և իր արժեքավոր խորհրդատվությամբ, բարյացակամ վերաբերմունքով, բայց և գիտական խստապահանջությամբ մեծապես նպաստել է խմբագրության գործունեությանը: Եվ խորհրդանշական է, որ «Բաների» հորելյանական 100-րդ համարը լույս է տեսնում նշանավոր հայագետի ծննդյան 80-ամյակի օրերին:

Իմաստուն և խիղճուն այս տարիքի բարձունքից նայելով կարող ենք ասել, որ գիտնականի լայն մտահորիզոնը, գիտության այսօրվա մակարդակին անմիջաբար հաղորդակից լինելու կարողությունը, սթափ և ստեղծագործ միտքը, անդուլ աշխատասիրությունն ու բեղուն գրիչը մնայուն տեղ են ապահովել նրա համար հայագետների ամենաառաջին շարքում և միջազգային ճանաչում ու համբավ բերել նրան:

Լ. Ա. ԳՈՒՍԵՓՅԱՆ